

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՈՒՃԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՍԱԻՈՐՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Լիբանանի մէջ սուրիական ուժերը շարունակեցին իրենց վերադասարարումը, սակայն այս անգամ հիւսիսային Լիբանանի մէջ գտնուող Պարէտ գետի եկերքէն մինչեւ Հոմսի եւ Քըլէ-յաթի օդակայանին մուտքը:

Նշենք, որ սուրիական ուժերը պինդորնրեցին, սարքերով ու պինամբերով ուղղուեցան սուրիական սահմաններ:

Միւս կողմէ, Ազգային Կուսակցութիւնը դրուատեց սուրիական ուժերու վերադասարարումը եւ շեշտեց, որ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ իր խոստումը յարգած է, իսկ Լիբանան սկսած է «բուժուիլ» եւ ապացուցել, որ ապահովական իր ուժերը կարող են պաշտպանել քաղաքացիական կայունութիւնը:

ՕՍԼՕ ԵՄՍ ԱՆԴՐՊՈՒԵԼԻ ԿԸ ՄՆԱՅ ՇԱՐՈՆԻ ...

Շարունակուած Ա. Էջն

տարիներու ընթացքին կարեւոր դերակատարութիւն ունեցած Օսլո պիտի չընդառաջէ Շարունի պահանջին: Շարուն կը պատրուակէ, որ Արաֆատ կ'ապահովուի վարչապետ Մահմուտ Ապպաի իշխանութիւնը ու կ'արգելակէ խաղաղութեան գործընթացին յառաջխաղացքը: Նորվեկիա հիւրընկալած ու հովանաւորած էր Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ գաղտնի բանակցութիւններ, որոնք 1993ին առաջնորդած էին Օսլոյի համաձայնագիրին, որուն հիման վրայ հաստատուեցաւ պաղեստինեան ինքնավար իշխանութիւնը:

Շարուն, որ եռօրեայ այցելութիւն մը տուած էր Բրիտանիա, չէր յաջողած համոզել Լոնտոնն ալ, որ իսկ Արաֆատի հետ կ'ապերը: Շարուն պահանջած էր նաեւ, որ Բրիտանիա ճնշում բանեցընէ պաղեստինեան իշխանութեան վրայ, որպէսզի արշալի մը ձեռնարկէ ծայրայեղական ղեկավարներու դէմ, պատճառով ձեռքով ձեռքով ինքնավարութիւնը, որ կը յուսար ապահովել Բրիտանիոյ պարակցութիւնը:

(ԱՖՓ)

ՆԱԽԱԳԱԿ ԼԱՀՈՒՏ ԿԸ ՀԵՏԵԻ ԱՌԿԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐՈՒ ԼՈՒԾՄԱՆ

Նախագահ Կ. Ըմիլ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիին, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը եւ ներկայ շրջանային իրադարձութիւնները:



Նախագահ Կ. Ըմիլ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիին:

Հանդիպումէն ետք Պըրրի յայտնեց, որ նախագահ Լահուտի փոխանցած է նախանցեալ օրուան խորհրդարանի արտակարգ նիստին մանրամասնութիւնները եւ աւելցուց, որ նախագահ Լահուտ կը հսկէ քարահանքերու, աղբահոսքերու եւ մաքուրով բանող ինքնաշարժներու թղթածրարներուն լուծման, որովհետեւ անոնք առնչուած են կենսոլորտին եւ անոր պահպանման:

Պըրրի ըսաւ, որ քննարկումի առարկայ դարձած են նաեւ Իրաքի վերջին իրադարձութիւնները եւ շրջանային վարգացումները:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ հաղորդակցութեան հարցերու նախարար Ժան Լուի Քըրտահի: Նախագահ Լահուտ Քըրտահիի հետ քննարկեց նախարարութեան առնչուած հարցեր, յատկապէս՝ բիջալիս հեռաձայնի ընկերութիւններու ապապետականացման թղթածրարը:

Պատասխայի այցելուներէն էին նաեւ ընդհանուր դատախաչ Ատնան Ատուտի եւ պետական անվտանգութեան ընդհանուր տնօրէն Կ. Էտուար Մանսուր:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիի Պըրրի երէկ խորհրդարանին մէջ ընդունեց 14 երեսփոխաններ, որոնց հետ քննարկեց երկրին ընդհանուր իրադարձութիւնները եւ նախանցեալ օրուան կառավարութեան հարցաքննութեան նիստին արդիւնքները:

Պըրրի շեշտեց, որ հարկ է աղբերու հարցին անբողջական եւ վերջնական որոշում մը գտնել:

● ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻ երէկ Քորթեմի մէջ ընդունեց երեսփոխան Մոհամէտ Ալի Մէյար: Քննարկուեցան Պէքայի բարգաւաճման հարցը, յատկապէս երկրագործութեան եւ երկրագործներու օժանդակելու թղթածրարները:

Վարչապետին այցելեցին նաեւ ճարտարարուեստի եւ առևտուրի գրասենեակներու նախագահ Ատնան Քասսար եւ Լիբանանի մէջ Քարթի դեւպտան Մարտի Պըն Մոհամէտ Ալ Խաթէր:

● ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի իրանահանքներու հարցերու նախարար Ժան Օպէտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Հիւսէյն Տարաբը, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները եւ Լիբանան - Եգիպտոս օդանաւային թռիչքներու առնչուող հարցերը:

● ԱՐԿԱՐԱՂԱՏՈՒԹԵԱՆ նախարար Պահիթ Թապարա երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Յրանքո Միսթերթան, որուն հետ քննարկեց Լիբանան - Երոպական Միութիւն համագործակցութեան անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ արդարադատութեան նախարարութեան կարիքները:

● ՄՇԱԿՈՅԹԻ նախարար Դապի Արիտի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Չեխիոյ դեսպան Մարք Սքոլիլը, որուն հետ քննարկեց Լիբանան - Չեխիա երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ յառաջիկայ 21էն 24 Սեպտեմբերին «Մոմէմփիք» պանդոկին մէջ կայանալիք լիբանանաւելջիական փառատօնին պատրաստութիւնները:

● ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ միւլթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանի երէկ Տար Էլ Ֆարուայի մէջ ընդունեց կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր Ժարրը, որուն հետ քննարկեց կրթութեան եւ կրօնական ոլորտներուն առնչուող հարցերը:

● ՀԶՊԱՆՈՒՅԻ հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալլա երէկ ընդունեց Դովմի Կուսակցութեան մէկ

պատուիրակութիւնը, նախագահութեամբ կուսակցապետ Ժըպրան Արայժի: Քննարկումի ենթակուեցան լիբանանեան ներքին հարցեր, ինչպէս նաեւ պաղեստինեւիարայիէեան շարունակուող տագնապը եւ Իրաքի մէջ պարտադրուող ամերիկեան ներկայութիւնը:

Հանդիպումին ընթացքին շեշտուեցաւ Իրաքի գերիշխանութեան պարակցելու անհրաժեշտութիւնը:

● ԱՌԵԻՏՈՒՐԻ Եւ տնտեսութեան նախարար Մարուան Համատէ երէկ յետմիջօրէին ընդունեց Միջազգային Դրամատան մէկ պատուիրակութիւնը, որուն հետ քննարկեց «Փարիզ - 2» վեհաժողովին մանրամասնութիւնները, պաղեստինեան իրադարձութիւնները եւ Իրաքի վարգացումները: Համատէ շեշտեց, որ Լիբանան շրջանին մէջ բանալի դեր կը խաղայ առևտուրի իմաստով:

● ԱՇԽԱՏԱՆՔԻ նախարար Ասատ Հարտան երէկ ընդունեց թմրեցուցիչի դէմ պայքարող երիտասարդական ժՄՍ միութեան մէկ պատուիրակութիւնը, որոնց հետ քննարկեց թմրեցուցիչի մոլիներու բուժման յատուկ հիւանդանոցի Չահլիի մէջ կառուցման ծրագիրը, ինչպէս նաեւ նախարարութեան հետ գործակցութիւնը՝ վերջ տալու համար թմրեցուցիչի գործածութեան:

● ԵՐԿՐԱԶԱՓՆԵՐՈՒ Եւ Կապալառուներու Միութիւնը երէկ շարունակեց քննարկել քարահանքերու թղթածրարը: Միութիւնը կոչ ուղղեց կառավարութեան վերատեսութեան ենթակելու քարահանքերու վերջնական ապահովման արձուար, ինչպէս նաեւ մերժեց շինարարութեան յատուկ նիւթեր (քար եւ արաւ) ներածել այլ երկրներէ:

Միութիւնը առաջարկեց իրրեւ պատիժ

«ՆՈՒՐ» ԽՄԲԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ ՇՐԵՅՏԻ ՄԱՅԱՅՄ

Պաղեստինեան Այն Հելուէ գաղթականային մէջ երէկ «Նուր» խմբակի ղեկավար Ապտալլա Շրէյտի մահուան գուժը ստեղծեց կատարեալ լուրջութիւն եւ պոռնուրիւն: Նշենք, որ Շրէյտի աւելի քան միւս մը առաջ գաղթականային հարաւային մուտքին առջեւ վիրաւորուած էր բախումի մը ընթացքին:

Գաղթականային պաղեստինցի ղեկավարները հեռաձայնային հաղորդակցութիւններով կապուեցան պաղեստինեան կապակերպութիւններու եւ իսլամական շարժումներու հետ, արգիլելու համար գաղթականային ներքին կացութեան վատթարացումը:

ՔԱՐԱՄԷ ԵՒ ՔՐՏԱՀԻ ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ Կ'ԱՌՆԵՆ ԲԶԻՋԱՅԻՆ ՀԵՌԱԶԱՅԻՆԻ ՄԱՐԶԻՆ ՀԱՐՑԵՐԸ

Նախկին վարչապետ Օմար Քարամէ երէկ յայտարարեց, որ Լիբանանի ներկայ իրավիճակը չ'արտօներ «ձեռնպահ մնալ», վստահեցնելով, որ խորհրդարանի նախանցեալ օրուան արտակարգ նիստը վերստին առիթ տուաւ խորհրդարանին փաստելու իր ներկայութիւնն ու դերակատարութիւնը, յատկապէս երբ ընդունեց հարցաքննութեան յատկացուած շաբաթական հերթականութեամբ գումարուելիք նիստերու կայացումը:

Քարամէ նշեալ յայտարարութիւնները կատարեց հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քըրտահիին ընդունելէ ետք:

Քարամէ խստի քննադատեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի գործունէութիւնը եւ դիտել տուաւ, որ վարչապետը կը խոստովանի, որ անկարող է օրէնքը գործադրելու: «Սա կը նշանակէ թէ ան իր պարտականութեան մէջ կը թերանայ», ըսաւ Քարամէ:

Քարամէ յայտնեց որ շատեր իր նման մտահոգ են բիջալիս հեռաձայնի մարպին եւ անոր պատասխանատու ընկերութիւններուն գծով եւ շեշտեց, որ հարկ է պատճառ փոփոխութեան ենթարկել երբ այդ մէկը հարկ ըլլայ:

Քարամէ ըսաւ, որ դժբախտաբար պետութեան մէջ կարգ մը անձինք առիթ կ'ընծայեն, որ ընկերութիւնները պետութեանն աւելի պօրանան:

Իր կարգին, Քըրտահի յայտնեց, որ այսօր տեղի պիտի ունենայ բիջալիս հեռաձայնի ընկերութիւններու ապապետականացման գերագոյն խորհուրդի ժողովը, որպէսզի կատարուին խորհրդակցութիւններ եւ վերամշակումներ՝ բիջալիսի ընկերութիւններու նուազուորդի պայմաններուն գծով:

Ան աւելցուց, որ կառավարութիւնը այսօրուան իր նիստին ընթացքին պիտի չքննարկէ բիջալիս հեռաձայնի մարպի ապապետականացման թղթածրարը:

Քըրտահի շեշտեց, որ պետութիւնը իր բոլոր իրաւունքները պիտի վերստանայ, նշելով, որ պետութեան իրաւունքը երբեք չի կորսուիր:

ԲԱՇԱՆԱՅԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ
Կիրակի, 20 Յուլիս 2003ին, Սոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ իր անդրանիկ Ս. պատարագը պիտի մատուցէ եւ քարոզ եկեղեցւոյ նոր հոգեւոր հովիւ: ԱՐԺ. Տ. ՊՈՂՈՍ ԲՆՅ. ԲԵՇԿԵՐԵԱՆ

ԲԱՆԵՏԱԻՈՐՈՒՄԸ
Տեր եւ տիկին Յակոբ եւ Մարալ Ատուրեան բախտաւորուած են երրորդ մանչ գաւակով մը: ՍԵՐՈՒԺ 8 Յուլիս 2003

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
8:30 Լիբանանեան մամուլի խորհրդարանի ընթերցում՝ արաբերէն
8:45 «Աստղեր»
10:05 ՀԵՇՂՄԻ հիմնադրութեան 40ամեակին առիթով հարցազրոյց՝ նախկին ՀԵՇՂՄԱԿԱՆՆԵՐ՝ Խաչիկ Տետեանի, Յամիկ Պատիկեանի եւ Յորճ Պարամագեանի հետ
11:30 Լիբանանեան մամուլի խորհրդարանի ընթերցում՝ հայերէն
3:00 Արաբերէն յատուկ յայտագիր, Մար Շարպէլի տօնին առիթով
5:00 «Աստղահոյլ» յայտագիրը նուիրուած է Ազգային Պետական եւ Զաւիթի դրամշտանոցներու զաշնակի փորձ. արուեստագետ Ստեփան Եմիեանի
8:00 «Ընթարային»

ՄԱՀԱԶԴ
Տէր եւ տիկին Լեւոն Սիմիքեան եւ գաւակուէք
Տէր եւ տիկին Նազո Լիպարիտեան եւ գաւակուէք
Տէր եւ տիկին Փոլ Լիպարիտեան եւ գաւակուէք
Տիրա ժագո Գալիպեան
Տիրա Միքայէլ Միքայէլեան
Լիպարիտեան ընտանիք
Մէմէրեան ընտանիք
Գալիպեան ընտանիք
Սիմիքեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, գորանչին, մօրաբորջ եւ հարազատին:
ԳՈՀԱՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆԻ (ՇՆՃԵԱԿ՝ ԱՅԱՆԵԱՆ, 1918ԻՃ)
մահը, որ պատահեցաւ Զորեքչարթի, 16 Յուլիս 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուլիսի 17-ին Զորեքչարթի, 17 Յուլիս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, էլեքֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխարդուի Յըրն Շրպէլի Ազգային գերեզմանատունը:
● Ներկայիս ընդունիլ իրրեւ մահապը:
● Յասակցութիւնները կ'ընդունուին Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» արահին մէջ, Հինգշաբթի 17 եւ Ուրբաթ 18 Յուլիսին:

ՃԱՇԿԵՐՈՅԹ
Հովանաւորութեամբ՝ ՏՈՔԹ. ՍԵՊՈՒԿ ՅՈՎԱՆԵԱՆԻ (Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար)
Կազմակերպութեամբ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՄԻԱՅԵԱԿ ՄԱՐՄԻՆԻ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 25 Յուլիս 2003, երկկողման ժամը 9:00ԵՆ սկեալ, Այն Սաատի «L'OS» ճաշարանի մէջ:

DAY WATER
RECOMMENDED FOR BABIES
Clean & Safe Water Under Hygienic Condition
NATURAL - PURE LIGHT - LOW IN SODIUM
Free delivery
19 Litre @ 2000.L
Mr. Jim Keushkerian owner
DAY WATER, Tel.: 03/435298

ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅԵՐ Ի ՆՊԱՍՏ ԱՐԱՅԱԹԻ ԵՒ ՊԱՂԵՍԻՆՅԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՈՒԺԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ ՄԸ ԱԶԱՏ ԿԱՐՁԱԿԵՆ ԱՌԵՒԱՆԳՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ՄԸ

Իսրայելեան քոմունիստներու կողմէ առեւանգուած վարորդի մը ազատագրումը շնչեց խաղաղութեան գործընթացին յառաջ-խաղաքը արգելակող խոչընդոտներէն մէկը: Բանակին կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը կը յայտնէր, որ իսրայելեան քոմունիստներու եւ Շին Պէթ ապահովութեան գործակալութեան կողմէ կազմակերպուած միացեալ գործողութեան մը արտօսին, կարելի եղաւ ազատել 61 ամեայ Էլիահու Կորէլը եւ ձերբակալել զայն առեւանգողները:

Գործողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի գիշերը, երբ իսրայելեան ուժեր ներխուժեցին Ռամալլայի մօտ գտնուող Պիթուսիա քաղաքը, ուր արգելափակուած էր Կորէլը: Իսրայելացի վարորդը առանձին էր ու առողջ բնակարանին մէջ:

Կորէլ անհետացած էր Շաբաթ օր, Արեւելեան Երուսաղէմի մէջ: Աւելի ուշ, անձանօք մը անոր ընտանիքին հետեւանալով տեսնուեցին, որ Կորէլ առեւանգուած է, սակայն անոր որեւէ վնաս պիտի չհասնի: Պաշտպանութեան նախարար Շաուլ Մոֆաշ ըսած էր, որ Կորէլի առեւանգումն ետին կրկանգնին պաղեստինեան ահաբեկչական շարժումներ:

Իսրայելեան ապահովութեան աղբիւրներ հաղորդեցին, որ հետաքննութիւններուն լոյսին տակ յաջողած են ձերբակալել պաղեստինցի պարմա-



Նուրի մը, որ խոստովանած է, թէ նշանածին հետ մեղսակցած է առեւանգումի գործողութեան: Անկէ ետք է,

որ ապահովութեան ուժերը յաջողած են նշանածին հետ մեղսակցած է առեւանգումի գործողութեան: Անկէ ետք է,

Պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս ամբողջական Շարք' էջ 10

ԻԿԱՆՈՎ ԼԱՇՈՒՏԻ, ՊԵՐՐԻԻ ԵՒ ՇԱՐԻՐԻԻ...

Շարունակուած Ա. էջէն

Իր կարգին, Իվանով քննարկեց Լիբանանի կեցումը Իրաքի իրադրութիւններուն նկատմամբ եւ ըսաւ, որ Իրաք ամէն իրաւաստութիւն ունի ընտրելու իր ղեկավարները, այլ խօսքով՝ օրինական ներկայացուցիչները, խնդրելով ՄԱԿի օժանդակութիւնը, որպէսզի Իրաքի ժողովուրդը ժողովրդավարութեամբ արտայայտուի երկիրը յուլող բոլոր հարցերուն եւ տագնապներուն շուրջ:



Իուծումը՝ բանակցութեանց ճամբով:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՊԵՐՐԻԻ ԵՒ ՇԱՐԻՐԻԻ ՀԵՏ

Իվանով այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեպի Պրերիի, որուն հետ քննարկեց Միջին Արեւելքի մէջ կայունութեան ամրապնդման համարի գործընթացը, ինչպէս նաեւ շեշտեց պաղեստինեալիսրայելեան բանակցութեանց անհրժեշտութիւնը շրջանին մէջ արդար եւ ամբողջական խաղաղութեան ի խնդիր:

Յետմիջօրէին Իվանով այցելեց Պուսթոս պալատ, ուր տեսակցեցաւ իր պաշտօնակիցին՝ Ժան Օպլիտի հետ: Հանդիպումին աւարտին Օպլիտ եւ Իվանով տուին մամուլի միացեալ ասուլիս մը, որմէ ետք Իվանով մեկնեցաւ Եգիպտոս:

ՔԱՆՆԻ ՄԸ...

Շարունակուած 2րդ էջէն

յտակ տուրքեր ճշդէլ քարահանքերու սեփականատէրերուն, որպէսզի կենսոյոյրտային պահպանման դէմ որեւէ խախտում չկատարուի:

● ԵԼԵՒՄՈՒՏՔԻ նախարար Ֆուատ Սիւնորա երէկ յայտնեց, որ պետական պիտուէի բացը հասած է 845 միլիարդ լ. ոսկիի, իսկ պետական գանձարկին տրամադրուած գումարները տարեկան 5399 միլիարդ լ. ոսկիի:

● ՍԵՆՏՆԱԿԱՆ ԱՐԱՐԻՈՅ պանդոկներու յատուկ Ներդրումներու Միութեան տնօրէն խորհուրդի նախագահ իշխան Ուալիտ Պըն Թալալ երէկ ստորագրեց 20 միլիոն տոլար արժողութեամբ համաձայնագիր մը «Ֆրաթ Նէշնըլ» դրամատան տնօրէն Ռամի Նըմրիի հետ, իբրեւ դրամագլուխ Դամասկոսի «Ֆոր Միսընզ» պանդոկին:

● ԶԲՕՍԱՆԵՐ ԶՈՒԹԵԱՆ նախարար Ալի Ապտալա երէկ երեւափոխան Պահիա Հարիրիի հետ քննարկեց «Արաբ Միտք 2» խորհրդածողովի պատրաստութիւնները: Նշեց, որ նշեալ խորհրդածողովը տեղի պիտի ունենայ Պէյրութի մէջ, յառաջիկայ Հոկտեմբերին:

● ՈՒԺՄ ՆԻԻԹԻ եւ ջուրի հարցերու նախարար Այուպ Հըմալիտ եւ ճարտարարուեստի նախարար Էլիաս Սքաֆ երէկ հանդիպում մը ունեցան Չահլէի քաղաքապետարանին մէջ, ուր յայտարարեցին, որ ծրագրած են Չահլէի մէջ վրօսաշրջութեան բարգաւաճման նպատակով մշակուած յատուկ ծրագիր մը գործադրել:

● ԳՍԱԿԱՆ առեւանգներու տարեկան ընթացքը տեղի ունեցաւ երէկ, «Քապիւս Տիւ Լիպան»ի մէջ, ուր ներկայ գտնուեցան արդարադատութեան նախարար Պահիթ Թապպարա, կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր Ժըրը, դատական իշխանութեանց գերագոյն խորհուրդի նախագահ, դատախաչ Թահիս Սուրի, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ:

Հանդիսութեան ընթացքին պարգեատրուեցան դատական իշխանութեանց գերագոյն խորհուրդի նախկին 6 նախագահները:

Advertisement for IGOL FUEL CARD. The ad features the IGOL logo and the text 'FUEL CARD գործածեցէք' (Fuel Card use it). Below the main text, there is a list of participating companies: MANAR - Տորա, ԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Ֆամուտ, BASSIL - Տորա, կամուրջի մօտ, AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպան»ի մօտ, SPEED - Ֆամքաշ, Կալէրի Իթթիհատ, ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագ»

ԻՆՉ ԿԸ ԳԻՆԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

16 Յուլիսի իրենց թիւերով լիբանանեան օրաթերթերը լուսարձակի տակ առած են խորհրդարանի նիստը, Սուրիոյ կեցումը Իրաքի իրադրութիւններուն շուրջ, Արաֆաթի եւ Ապպասի միջեւ համաձայնութեան հաստատումը:

«Սաֆիր» գրած է, թէ խորհրդարանի նիստին տեղի ունեցած հարցաքննութիւնները վերաշխուժացուցին խորհրդարանը եւ հաշիւ պահանջեցին կառավարութենէն:

Թերթը հարցապրոց մը ունեցած է ներքին գործոց նախարար Էլիաս Մըրիի հետ, որ ըսած է, թէ քաղաքապետական ընտրութիւնները տեղի պիտի ունենան իրենց որոշուած թուականին, իսկ վարչապետ Հարիրի կառավարութեան կազմութեան առաջին օրէն չընտելացաւ քաղաքապետարաններու նոր գործելակերպին:

«Լիուս»ի համաձայն, տաք ու բուռն վէճեր տեղի ունեցան քարահանքերու, աղբանոցներու եւ դատական հարցերու շուրջ:

Թերթը նշած է, թէ Ուաշինկթըն տեղեակ պահուեցաւ սուրիական պիւնտրներու վերադասաւորումին գծով եւ վերահաստատեց սուրիական ուժերու Լիբանանէն վերջնականապէս հեռացման նեցուկ կանգնող իր կեցումը, իսկ սուրիական լրատու աղբիւր մը հաստատեց, թէ եղածը վերջնական քաշուիլ է եւ ոչ՝ վերադասաւորում:

«Անուար»ի համաձայն, Պըրրի կը հրաւիրէ հարցաքննութեան նոր նիստի մը՝ յառաջիկայ Երեքշաբթի, իսկ խորհրդարանը կառավարութենէն կը պահանջէ դատական վճիռներ գործադրել, նոր ծրագիր մը մշակել քարահանքերուն համար ու նկատի ունենալ կենսոյոյրտային հարցերը:

Իրաքեան իրադրութիւններուն մասին «Սաֆիր» գրած է, թէ Դամասկոս դիտել կու տայ, որ Իրաքի ազգային գործադիր խորհուրդը կը գտնուի քննութեան դիմաց: Ըստ թերթին, նախագահ Ասատ յայտարարած է, որ Սուրիա կապ չունի խաղաղութեան քարտէսին հետ:

Թերթը նշած է, թէ բռնագրաւող ուժերը Սատամը դատելու բերը կը նետեն իրաքցիներուն ուսերուն, իսկ կառավարութեան կազմութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ շաբաթ հերթաբար նախարարներու նշանակումով:

«Լիուս» դիտել տուած է, թէ Պըմըր բռնագրաւումին աւարտը կ'առնէ սահմանադրութեան հաստատման եւ ընտրութիւններու կայացման: Ապահովական հարցերը Փենթակոնը կը դնեն իր ուժերը Միացեալ Նահանգներ վերադարձնելու ստիպողութեան տակ:

«Անուար» նշած է, թէ Ամերիկա իր ուժերն որոշ խմբաւորումներ Իրաքէն հեռացնելէն ետք դարձ կը կատարէ, իսկ Պուշ ուժեր կ'ուղարկէ Լիպտիա:

«Անուար»ի համաձայն, կորիպային պէնքերու միջազգային ընտանիքը կապակածի տակ կ'առնէ իրաքեան իրանիումի առնչուող Լոնտոնի տեղեկութիւնները:

Ըստ թերթին, իրաքցիները կապակածի տակ կ'առնեն ազգային գործադիր խորհուրդին ունենալիք դերակատարութիւնը:

Ըստ «Սաֆիր»ի, Սիւլէյման կը գտնուի Ռամալլայի մէջ, մթնոլորտը կը կախուղցնէ եւ հաշտութիւնը կ'ամրապնդէ, Շարուն կը պահանջէ պաղեստինեան ներքին պայքարի բռնկում եւ քաղաքացիական պատերազմ:

«Տիար» գրած է, թէ Ապու Մապէն հանդիպում մը ունեցաւ եգիպտական գաղտնի սպասարկութեան պետին հետ, իսկ Արաֆաթ յայտարարեց. «Իշխանութիւնը կառուած կը մնայ խաղաղութեան քարտէսի գործադրութեան»:

Այլ լուրերու կարգին, «Սաֆիր» գրած է, թէ Ֆրանսա կը յայտարարէ, որ ինք Իրաքի մէջ ներդրում պիտի չունենայ, եթէ միջազգային ընտանիքի միջնորդութեամբ չկատարուի այդ գործողութիւնը:

Թերթին համաձայն, Պիթս կը քննադատէ Դանիան: Իրաքի պէնքերուն առնչութեամբ Իրաքի մէջ գործող պէնքի նախկին քննիչը կը յայտնէ, թէ Պուշ պատերազմի ձեռնարկէն հիմնուելով սուտի մը վրայ:

«Մուսաքալա» գրած է, թէ Միացեալ Նահանգներու մէջ կատարուած ուսումնասիրութեան մը համաձայն, իրաքեան պատերազմէն առաջ եւ անկէ ետք Միացեալ Նահանգներու մէջ իսլամներուն դէմ բռնութիւնները զգալիօրէն աւելցած են:

«Տիար»ի համաձայն, նախագահ Ասատ Իվանովի ձեռնարկէն մը ստացաւ Փոլսինէն եւ յայտարարեց, որ Սուրիա մնայուն կերպով պիտի աշխատի ամբողջական խաղաղութեան հաստատման ի խնդիր:

Advertisement for AL MOUHT TRAVEL & TOURISM. The ad lists various travel services and provides contact information: Մուրիոյ AL MOUHT TRAVEL & TOURISM-ի տեր եւ տնօրէն Արմ. Ազգած Զեյնուդին, որ միակ ներկայացուցիչն է ARMAVIA AIRWAYS-ի, համրութեան ուշադրութեան կը յանձնէ, թէ Լիբանանի մէջ իր միակ ներկայացուցիչն է ASHJIAN TOURS, որմէ կարելի է ապահովել Հայկա - Երեւան - Հայկա օդանաւի տոմսերը: Տոմսերու գինը երբ ու դարձ օդակայանի տոմսերով, միայն 230 ամերիկեան տոլար, խմբային ձեռնարկութեան պարագային՝ յաւելեալ գողչ, իսկ միութիւններու՝ յատուկ գողչ:

ԱՉԳԱՅԻՆ ՀԱԻԱՍԱՐԱԿՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թուրք-հայ «Հաշտութեան» երկխոսութիւնները յաջողական ծախողութիւններէն դասեր չի քաղեր: Իրարու յաջողուող մարտավարութիւնները կը փորձէ: Վերջին շրջանին այդ շարքի մարտավարութիւններուն թիրախը ամերիկահայութեան կարգ մը հատուածներն են, որոնք անվարան կ'այցելեն Նիւ Եորքի մէջ ՄԱԿի թրջական ներկայացուցչութիւնը եւ Քալիֆորնիոյ մէջ ալ թրջական կանխատեսարան: Այս այցելութիւնները թրջական համբաւաւոր արեւելեան սուրճը ըմբռնողներու համար չէ, այդ մէկը կրնան համտեսել Ամերիկայի բոլոր քաղաքներուն մէջ, ներառեալ՝ Նիւ Եորքն ու Քալիֆորնիան:

Հայ մամուլին մէջ «Հաշտութեան» լարախաղացութիւններուն մասին գրողներուն մեղանք պիտի չհատնի: Եթէ անգամ մը եւս կը գրենք այս թարախտ վէճերին մասին, պատճառն այն է, որ բացի Ամերիկայի Հայկական Համալսարանի նախաձեռնութիւններէն, բացի Ռամիպար Ազատական կուսակցութեան կողմէ թուրք պաշտօնատարներուն հետ հանդիպելու «նպատակաշարմարութեան», «անհաշտութիւնը» հաշտեցնելու նպատակով նախաձեռնակ ու մասնակից եղած են նաեւ Ամերիկայի էլմիսթանական արեւելեան եւ արեւմտեան թեմերու արքեպիսկոպոսերը: Այո՛, հարկ զգացած են արքեպիսկոպոսական մակարդակով մասնակցութիւն ունենալ, ասայով ու պանակէով:

Պիտի խնդրէի, որ այս գրութեան հակազդող որեւէ տրամադրութիւն կամ տրամաբանութիւն մեկնակէտ չունենար էմիսթանական կամ անթիւրիսական կառուցային տարբերութիւնները: Նշումը նոյնը պիտի ըլլար եթէ անթիւրիսական թեմի նախաձեռնութիւն ըլլար: Հարցը ամէն բանէ առաջ ազգային է եւ երբեք լոկ կրօնական: Հարցը ամէն բանէ առաջ քաղաքական է եւ ոչ թէ արքեպիսկոպոսական:

Լուրջ հարց կը ծագի, թէ ուրկէ՞ կը ընդ թրջական ներկայացուցչութիւններու մէջ իսկ, այս հանդիպումներու ճամբով իսկ, Հայկական Հարցը կարգաւորելու շարժարկին մուտք: Կուսակցութիւնը որոշեց, իրեն հետ քաջեք Հայ առաքելական եկեղեցւոյ առաջնորդները:

Սխալ նախաձեռնութիւններու ճամբով սխալ եզրակացութիւններու առաջնորդելով պէտք է խուսափել: Եթէ ՌԱԿը իր քաղաքական ուղեգիծի մարտավարութեան մէջ նպատակաշարմար դատած է Թուրքիոյ գաղտնի սպասարկութեան բաժնումուտքի վարիչին՝ Թեգճանի հետ հանդիպել, այդ նախաձեռնութիւնը այսօրուան գրութեան լուսարձակին մաս չի կազմեր: Հարցը կը վերաբերի ուղղակի էմիսթանական թեմի առաջնորդներուն: Որմէ՞ ուղղութիւն եւ հրահանգ կը ստանան Հայաստանի արտաքին քաղաքականութեան առնչուող այսքան ծանրակշիռ հարցի մը դասաորուումը կատարելու անկեղծութեան: Ո՛ր է մնաց էմիսթանի իրրու կաթողիկոսութիւն, որ իր կրօնական արտաքին-արարեական դիրքաւորումները կը ներդաշնակէ Հայաստանի կառավարութեան հետ, եւ ո՛ր է մնաց Ամենայն Հայոց կաթողիկոսը, որուն արտաքին հոգեւոր կամ գուճահոն առաքելութիւններն ու քայլերը անխտանափելի կարգաւորումով ու ըմբռնումով լրիւ կը համընկնին պետութեան, Ազգային ժողովին ու ազգային սահմանադրութեան քուէարկած յօդուածներուն:

Եթէ արքեպիսկոպոսական բարձր աստիճանին հասած հոգեւորականները Թուրքիոյ ներկայացուցչի մը տեսնելու համար հարկ չեն զգար կաթողիկոսին հետ խորհրդակցելու, այն ատեն պիտի պարտաւորուինք վկայակոչել չէքափիրեան Համալսարանի մէջ նախադասութիւնը «Փոսած բան մը կայ Դանիոյ թագաւորութեան մէջ»:

Հաւատազոյն ենք սակայն, որ կաթողիկոսին խորհուրդը առնուած չէ այդ հանդիպման մասին, մասնաւորապէս որ դիմացի տեսակցողը հոգեւորական մը չէ, թուրք պաշտօնատար մըն է այդ ալ թրջական պաշտօնական ներկայացուցչութեան շէնքին մէջ:

Ի՞նչ փորձութիւն...
 Ի՞նչ պիտի ըսէ ու ընէ կաթողիկոսը:
 Ի՞նչ պիտի ըսէ ու ընէ պետութիւնը:
 Կարելի չէ լուռ անցնել արտաքին քաղաքականութեան վերաբերող ազգային այսքան ծանրակշիռ դէպքերի մը վրայէն: Ընդհակառակը, նման եղելութիւններ աւելի վայն իմաստով խորհրդածութեան, եթէ ոչ մտահոգութեան պէտք է մղեն մեր կեանքը, իր քաղաքական ու հոգեւոր ղեկավարութեամբ, որովհետեւ կարելի չէ սքեմի անգրասկից օգտագործումով «անձնականացրել» հեռաքաղաքն ու հասարակական քաղաքականութեան որեւէ դերակատարութիւնը բնորոշող եղելութիւն, որ իր նմանը դժուար է թէ գտնէ Հայ կեանքին մէջ:

Հայաստանի իր բազմապիսի կուսակուցութեան խնդիրներով այսպիսի գլխացաւեր այ պէտք չէ դիմագրուէ, եթէ ոչ թիւրքի ըմբռնուած եթեւեկայական փոխադարձ կարգապահութեան երեւոյթը կրնայ աննախատեսելի ու անսրբազրելի մակարդակներու հասնել, կատարուած իրողութիւններու անբաղձի ու անհակադրելի զանցառութիւններ եւ խախտումներ թելադրելով:

Հայ կեանքի առաջնահերթութիւնները միայն եկեղեցին չի ճշգրտար: այսպէս անոնք պիտի չզոյաւանդեն եւ մեր գաղութային կեանքն ալ պիտի կորսնցնէ իր կառուցային հաւատարկութիւնները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՖՐԱՆՍԱ ԿԸ ԳՏՆՈՒԻ

Նախագահ Ռոպէրթ Քոչարեան Ֆրանսա կը գտնուի երկրին նախագահին հրահանգով: Յայտարարուած է, աշխատանքային այցելութիւն: Նախատեսուած են հանդիպումներ նախագահ Ժաք Շիրաքի, Մերակոյտի եւ Խորհրդարանի նախագահներուն եւ նախարարներուն հետ: Մանրաբնուած ժամանակացոյց մը:

Պետական յայտագրին մէջ որքան ալ կարելի չէ տեղադրել համայնքին հետ հանդիպում մը, բնական է, որ նոյն լազմանդամ համայնքը ցանկութիւն ունենայ լսելու: Նախագահը, լուսաբանուելու նախագահական եւ երեսփոխանական զոյգ ընտրութիւններէն ետք, որոնք ներքին ճակատի վրայ քննադատութիւններու եւ բողոքներու դուռ բացին, նաեւ՝ միջազգային շրջանակներու կողմէ:

Եթէ առիթ ընծայուի, նախագահին կը հարցնեմ.
 Ա.- Ինչո՞ւ գոյգ ընտրութիւնները ամբողջապէս վերահսկելի չեղան:

Բ.- Ինչո՞ւ ժողովուրդը դէմ քուէարկեց սահմանադրութեան վերանայման նախագիծին, որուն մէջ տեղ գտած երկքաղաքացիութեան հարցը մասնաւորաբար կը շահագրգռէր Սփիւռքը: Ի՞նչպէս կը նախատեսուի գալն լուծելը:

Գ.- Մահապատիժի վերացման հարցը դարձած է թնճուկ: Ան չէր մերժուեր եթէ Ազգային ժողովին մէջ պատահած ոճիրը եւ հետեւող դատավարութիւնը չՆԱՍԿԻ: Հայաստան ուրիշ երեք երկիրներու նման վերացման համար ջերմ չէ, բայց կիսամիջոցը կը մերժուի Եւրոխորհուրդին կողմէ: Ի՞նչպէս կը լուծուի հարցը:

Դ.- Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները տեղափոխ մէջ են, ինչ որ կայ միակողմանի է եւ միատեսակ աւարկայ ունի: Ե՞րբ եւ ի՞նչպէս իսկապէս համազգային բովանդակութիւն կը տրուի անոնց՝ նկատի ունենալով նաեւ Սփիւռքի գոյատեւման եւ ամրացման համար անհրաժեշտ միջոցները եւ միջոցառումները:

Ե.- Ի՞նչպէս ազգային լուծում պիտի գտնէ Հայաստանին պարտադրուած եւ սովորութիւնը դարձած հայերէնը ձեւագեղծած խորհրդային ուղղադրութիւնը:
 Նիստ հաւանական է, որ հանդիպում տեղի պիտի չունենայ, այս հարցումները պիտի չկարենանք ուղղել նախագահին եւ լսել զինք: Բայց արդիւնուած չէ, որ հետաքրքրուիք, խորհրդը լուծումներու մասին, որովհետեւ սզգին հիմնահարցներուն գծով առաջադրուելիք լուծումները ազգին բոլոր գաւակներուն պատասխանատուութիւնն են:

Կրկնած ենք. ժողովուրդավարական վարչաձեւը դժուար է, կը կարօտի բոլորին բարի կամքին, բայց նաեւ՝ օրէնքին ու անոր գործողութեան վերահսկողութեան: Հիմա որ Հինդ տարի կայ մինչեւ յառաիկայ գոյգ ընտրութիւնները, համազորակցութիւններով եւ մասնակցութեամբ, նաեւ Սփիւռքի, կարելի չէ՞ պայթար մղել, հանրային կարծիք պատրաստել ընդունելի չափանիշներով ընտրութիւն կազմակերպելու համար:

Երկքաղաքացիութեան հարցը բաց վէճ է: Չըլլալով ներհայաստանեան խնդիր՝ ան չի շահագործուել մըյա՛ Սփիւռքը, կրաւորական եւ զգացական հայրենասիրութեամբ, չի պայթարիր. բայց այլ չի նշանակել, որ յուսախարութիւն չկայ, որ կրնայ բացասական հակազդեցութիւններու ծնունդ տալ: Հանրային կարծիքը լուսաբանման աշխատանքին մէջ այս հարցը կարեւորութեամբ նկատի պէտք է առնել, որպէսզի յաւելեալ նպաստ բերուի ազգային միութեան եւ միասնակցութեան:

Մահապատիժի վերացման հարցով ցարգ Հայաստան չցուցաբերեց քաղաքակրթական-իմաստասիրական վերաբերում, վերլուծական ճիգ չըրաւ՝ ինքզինք տեսնելու համար այդ գծով ճամբայ կտրած երկիրներու շարքին: Քիչ մը վրէժխնդրական եւ ակն ընդ ակնին նախանակութեամբ, մերժարային տրամադրութիւնները սրուած են Ազգային ժողովին մէջ պատահած ծանրակըլիւ ոճիրէն ետք: Բայց կարելի՞ է հիմնահարց մը երկտրակէլ ամբոխային հոգեվիճակներու:

Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները միակողմանի եւ միայն են. նպաստել Հայաստանի տնտեսական վերականգնումին: Նոյնիսկ մշակութային կապերը միակողմանի են, Սփիւռքի իւրաքայտութեան եւ անոր ճանաչման գծով մտածուած եւ հետանկարային ճիգ չկայ: Հարցը երբեք օրակարգ չեղաւ գոյգ խորհրդաժողովներուն, մինչդեռ մշակոյթն է, որ մեր հոգեկան-ոգեկան մերձեցումը կրնայ իրականացնել՝ զբօսաշրջային զգացականութեան անդին անցնելով:

Ցաւոտ հարց է ուղղադրութիւնը: Խորհրդային ժառանգութեան ապագային եւ ապագայնացնող կնիքէն չեն ուզեր հրաժարիլ շատեր, մտաւորականներ եւ աւագանի, առական դպրոցներ յանախածներ եւ իրենց գործերը վերահրատարակուած չտեսնելու վախը ունենցողներ: Ազգային ոգիով բարատող քաղ ղեկավարութիւն մը, հայ գիրերու գիւտի 1600ամեակի լաւագոյն նուէրը կրնայ ընել ազգին, անցեալը եւ հատուածները շողկապելու յանդէպութեամբ, վերականգնելով հայերէնի հարագատ ուղղադրութիւնը:

3. ՊԱՆԵԱՆ

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ ՀԵՏԵՒԵՅԷՔ
 «ԱՍՏՂԱՀՈՅԼ»
 ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻՆ
 Կինգաբքի, 17 Յուլիս 2003, կտսոր ետք
 ժամը 5:00ից «Աստղաշիւղ»ը նուիրուած է դաշնակախար
ԱՍԵՓԱՆ ԷՄՄԵԱՆԻ
 Իրենց յուշերը կը պատմեն Զաւիթի երաժշտանոցի դաշնակի փորձեւտը
ԼՕՐ ԱՔԻՔԻ
 Դաշնակախար
ՎԱՀՐԱՄ ԷՄՄԵԱՆ
 Կաղորդաչարի խմբագիր՝ Ա. ԱՊՏԱԵԱՆ
 Պրպտուսներ՝ ՏԻԿԻՆ Ծ. ԲԱՏՈՅԵԱՆ
 Մի՛ մոռնաք ունկնդրելու «Աստղաշիւղ»ը

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԵՐՈՒ 2002 - 2003 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ՀՈՒՆՉՔԸ

Հայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն եւ արուեստից վարժարանները 2002-2003 կրթական տարեշրջանի աւարտին միասնաբար տուին 343 շրջանաւարտներ, որոնց վկայականներ շնորհուցան երեք տարբեր հանդէսներու ընթացքին:



ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ՀՈՒՆՉՔԸ՝ 62 ԾԱՂԻԿ

Մանկապարտէզի ամառվերջի հանդէսը տեղի ունեցած երկու հանգրուաններով, յաջողաբար՝ 24 Մայիսին եւ 8 Յունիսին: Առաջին հանգրուանով իրենց ձիւրբերը «ցուցադրեցին» մանկամտերի ծիւղերն ու երկու բողոքող պատրաստներու աշակերտները: Ամառվերջի երկրորդ հանգրուանի «հերոսները» Յեսրոպեանի կողմից ներու ծաղիկներն էին: Մանկապարտէզի երկու հանդիսութիւններն ալ փայլեցան իրենց կազմակերպուած խմբերով, Մանկապարտէզի երկու հանդիսութիւններն ալ փայլեցան իրենց կազմակերպուած խմբերով, Մանկապարտէզի երկու հանդիսութիւններն ալ փայլեցան իրենց կազմակերպուած խմբերով, Մանկապարտէզի երկու հանդիսութիւններն ալ փայլեցան իրենց կազմակերպուած խմբերով:

զէն Համասեան, Անի Գասպարեան, Ժորժ Օհաննէսեան, Յարութ Պուշքեան, Ժորժ Շատաթեան, Ժորժ Փուշքեան, Գեորգի Գեորգիեան, Մարիո Ճանիբեան, Մելքոն Մելքոնեան, Սիրէյ Քէչէեան, Միրնա Կէօզլէեան, Նարեկ Պասմաճեան, Նարեկ Պաղտասարեան, Օհաննէս Ուրֆալեան, Րաֆֆի Պողոսեան, Մանկապարտէզի երկու հանդիսութիւններն ալ փայլեցան իրենց կազմակերպուած խմբերով, Մանկապարտէզի երկու հանդիսութիւններն ալ փայլեցան իրենց կազմակերպուած խմբերով:



ԴԵՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԳԳԵՍՏՆԵՐԸ ՆՈՒՆԵՐՈՒՄԵՆԵՐ

Դեռեւորումի եւ գգեստներու ճիւղերով, փոքրիկներու համընդհանուր մասնակցութեամբ եւ գովելի բժախնդրութեամբ, որոնք բոլորն ալ կ'արտայայտեն մանկավարժական եւ վարչական անձնակազմի նուիրումը՝ իրենց գործին: Վ կ յ ա կ ան ն եր ու բաշխման առիթով իր արտասանած խօսքին մէջ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանի կողմից արտասանուած խօսքին մէջ արուեստը, որ յանձնառու մնալով մանկապարտէզը յարատեւորելու գարգացնելու խոստումն յառաջիկայ տարեշրջանին բողոքներուն համար պիտի հաստատուի յաւելեալ դասարան մը:

(ԸՆԴՆԱՆՈՒՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ)
 Այլն - Մարիամ Օհաննէսեան, Ժազ Խալիլ, Գասպարի Պաղտասարեան, Գրիգոր Կէօնճեան, Գրիգոր Եօթնդարեան, Նարեկ Պատիշահ, Սիրվա Տէքերմէնճեան, Դայար Թիւլպեան եւ Վիդի Աթաբարյան:

(ԿԵՆՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐ)
 Թեֆէիթլի
 ՊԱՔԱՆՈՐԷԱՅԻ
 ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՑԱՆ
 Անի ժամկոչեան, Գարմէն Մեջբիւնեան, Յասմիկ Կէօզլէօգեան, Միրնա Պեթարեան եւ Մայա ժարժուրա:

ՊԱՔԱՆՈՐԷԱՅԻ
 28 ՇՐՉԱՆԱԿԱՐՏ, ԹԵՔՆԻԲԸԼ
 ՊԱՔԱՆՈՐԷԱՅԻ
 19 ՇՐՉԱՆԱԿԱՐՏ
 6 Յուլիսին տեղի ունեցած Հայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն եւ արուեստից վարժարաններու ամառվերջի միացեալ հանդէսը, նախագահուած Մեսրոպեանի կողմից, կարգաւարտներու համար պիտի հաստատուի յաւելեալ դասարան մը:

2002-2003 տարեշրջանի Մեսրոպեանի վկայականները արուեստից վարժարաններու ամառվերջի միացեալ հանդէսը, որ յանձնառու մնալով մանկապարտէզը յարատեւորելու գարգացնելու խոստումն յառաջիկայ տարեշրջանին բողոքներուն համար պիտի հաստատուի յաւելեալ դասարան մը:

ԱՐՈՒԵՍԻՑԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ 194 ՇՐՉԱՆԱԿԱՐՏԵՐ
 Նոյն օրուան հանդիսութեան վկայականներ ստացան նաեւ Մեսրոպեան արուեստից վարժարանի մասնագիտական դասընթացներու աւարտականները: 2002-2003 տարեշրջանի աւարտով արուեստից 9 մասնագիտութիւններու գծով (համակարգչային գիտութիւն, անգլերէն, անգլերէն, իրիթիցի, ոսկերչական ձեւաւորում, մոմի կաղապարաշինութիւն, աղամանդաշարութիւն, դիմաքարտու եւ վարտաքարտաշարութիւն) ստուել 194 շրջանաւարտ:

Orientplus
 KIBBAZ TRAVEL & TOURS
 Touch New World
Farna
 \$319
 8 days - Direct Charter Flight
 Every Tuesday starting from 8 July
 Other Destinations
 Boat Trip to
 Cyprus 3 Days
 \$190 \$425
 BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT
 ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES
 01.900598, 901598
 03.258336, 256254
 www.orientplus.com
 ՅՈՎԱԿԻՄ ՊԱՐԱՉԵԱՆ

ՆԱՍԱԿ ԸՍՅՐԵՆԻՔԵՆ

ՍԵՒԱՆԻ ԱՓԵՐՈՎ

Սեւանի ջուրի մակար- դակին բարձրացման եր- ջանիկ վկայություններն մը կ'ուզեն ընել:

Գիտեմ, որ ամբողջ ազ- գով կը տազնապահեմ Սե- ւանի ապագայով, կ'ապ- ընեմ մղձաբանները օր մը, ոչ չի տ հեռու, ցամաքած տեսնելու Գեղարքունեաց լիճը: Մեր հաւաքական թերահաւատութիւնը ամէն տեսակի խոստում- ներու, պետական որո- շումներու կամ միջոցա- ռուսներու հանդէպ լաւ հիմքեր ունեցած են, դժբախտաբար: Սեւանի մակարդակի բարձրաց- ման կամ այդ ուղղու- թեամբ ձեռնարկուած քայլերուն մասին մամու- լով պարբերաբար հրատա- րակուած թիւերուն ու տուեալներուն կը նայէինք ցաւոտ քննադատով:

Այդ իսկ պատճառով, անշուշտ՝ ըստ ազգային մեր համակերպող հոգե- խառնուածքին, արդէն Սեւանի հետզհետէ ճահ- ճացման, անոր կենսոլոր- տի ապականման, անոր դատապարտուած ըլլալու փաստին հետ հաշտուելու եզրեր կը փնտռէինք:

Հաճելի անակնկալ էր ինծի ու հայաստանցի ըն- կերներու համար, որոնք հետ անցեալ շարքի Սե- ւան գացինք ամառնային մեր ընտանեկան արձա- կուողի համար տեղ փնտռելու նպատակով: Իրենք առաւել եւս կը զգային ու կը գնահատէին

եղած փոփոխութիւնը: Ես կատարեցի իմ անձնական գնահատումս: Քանի մը տարի առաջ սփիւռքահայ ընկերներու հետ նստած էինք Սիսուան ճաշարանի արդէն մաս կազմած փեթերին դրուած սեղան- ներու շուրջ, որոնք ջուրի սահմանէն առնուածն տաս մեթր հեռաւորու- թիւն ունէին, եւ ուր երկու նաւակներ կը սպասէին յաճախորդներու: Հիմա նոյն ճաշարանին բարձ- րացուցած պատը արդէն քանդուելու վրայ է, ծովը փակած է ճաշարանէն ջուր տարածքը, եւ անոր ակիւնները կը հարուածեն սանթրիմեթր բարձրութե- նէ:

Սեւանի ջուրի մակար- դակը իրաւամբ բարձրա- ցած է, երբ տակաւին միւս մեծ փրկարար միջոցը՝ Որոտանի եւ Արփայի ջու- րերը Գեղամայ ծով հասցը- նող «թունելի» շինարա- րութիւնը չէ աւարտած: Ուրեմն առաւել եւս երջա- նիկ պէտք է ըլլալ, որովհե- տեւ փրկութեան յաւելեալ երաշխիք մը կ'ապահով- ւի:

Յամենայնդէպ Սեւա- նը այսօր շատ աւելի առողջ, կենսունակ ու հրապուրիչ կ'երեւի, քան առաջ, ու կ'արժէ մարդ այստեղ կազմակերպէ իր ամառնային հանգիստն ու արձակուրդը: Նոյնը կը թելադրեմ զբօսաշրջիկնե- րուն, մանաւանդ անոնց,

որոնք առաջին անգամ չէ, որ կու գան Հայաստան:

Սեւանի ափին այսօր արդէն կառուցուած են յարմարաւէտ պանդոկներ ու առանձնատուններ, որոնց շարքին, վստահ եմ, որ լսած էք «Հարսնա- քար»ի ու Թիւֆէնքճեանի Մարագ-Մապաթաղ պան- դոկներուն մասին: Առա- ջինը Սեւանի ամէնէն մօտ ափին է, վաթսուս քիւր- մեթր Երեւանէն, երկրոր- ղը աւելի հեռու, Շորա- դիկներուն մասին: Առա- ղը փրկման մօտ, հարիւր քսան քիւրմեթր մայրաքաղա- քէն: Բարձր մակարդակի ու քիչ մը սուղ հաստա- տութիւններ են ասոնք, որոնց կողքին կան սա- կայն ուրիշներ, առաւել յարմար գիներով, ոչ նոյն- քան շքեղ, սակայն՝ հան- դիստի ըլլող պայմաննե- րով, մշտական տաք ջու- րով ու մաքուր սենեակնե- րով:

Մենք նախընտրեցինք «Ալպաթրոս» կոչուած վարը, Հարսնաքարի մօ- տիկ: Ստեփանաւանէն ժա- մանակին երկար ճանի արդեանքները պատասխան- լու համար արտասահմա- նեան շարժական տուններէ քաղկացած համալիր մըն է ասիկա, բաւական լայն լո- դափով, առանձին ճաշ- արանով ու ժամանցի քանի մը այլ յարմարութիւննե- րով: Մեր կարծիքով, ըն- տանեկան հանգիստի լա- ճապոյն հնարաւորութիւն ընձեռող տեղ մը: Օրակա- ն վարձքը քառասուն տո- լար՝ նախաճաշով: Տունե- րուն մէջ չորս հոգի հան- գիսու կրնան տեղաւոր- լիլ:

Զբօսաշրջիկները կրնան ծովային իրենց վա- յելքին հետ նաեւ հետա- խուզել շրջապատի գեղեց- կութիւնը, հասնել արդէն մօտիկ դարձած Դիլիջան, Հաղարծին, Պարզ լիճ, Գո- ռատեան ժամերուն կրնան նաեւ բարձրանալ Գեղա- մայ լեռները ու տեսնել հազարաւոր տարուան հնութիւն ունեցող ար- լեստի անզուգուծան նմուշ- ներ՝ ժայռերու վրայ քան- դակուած պատկերներ:

Մէկ խօսքով, ինչպէս ինծի շատ մօտիկ անձ մը կ'ըսէ, Հայաստան այցելող զբօսաշրջիկը պայման չէ, որ ամէն օր ինքնաշարժ նստի ու տեղ մը երթայ: Կրնայ նաեւ պարզապէս գեղեցիկ վարի մը մէջ հանգիստ ընել, երեխանե- րուն հաճելի ժամանց տրամադրել, Հայաստան այցը իսկական վայելքի վերածել:

Սեւանը, օրուան ըն- թացքին քանի մը անգամ փոխուող գոյնեցող, օգոս- տոսեանցի գաղջ ջուրով, այդպիսի տեղ մըն է: Մենք մեր ընկերներուն հետ ըն- տանեօք այնտեղ պիտի անցնենք քանի մը օր: Կը հրախրենք ձեզ ալ:

«ՅՈՅՍԻ ԱԻԱՆ»Ը՝ ԲԱՐԱԿԵՐՏ ՊԱՏԳԱՄ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹԻՒՆ

Երեւանի մէջ կառուցման ընթացքի մէջ է տնտեսա- կան դժուար պայմաններու մէջ գտնուող ընտանիքնե- րու համար աւան մը, օժտուած՝ 200 ընտանիքներու յար- մարաւէտ բնակարաններով, դպրոցով, բուժարանով, մշակութային եւ առեւտրական կեդրոններով, ինչպէս նաեւ՝ ժամանցի եւ հանգիստի հնարաւորութիւններով: Թէեւ «Յոյսի աւան» խորհրդանշական անուանումը կրող այս համալիրին աշխատանքները կ'աւարտին 5-6 տարիէն, սակայն Յունիսի սկիզբը արդէն 20 ընտանիք- ներ փոխադրուած են աւանի կառուցուած բաժինը:

«Յոյսի աւան»ի պատմութիւնը կը սկսի 1988ին, Սպի- տակի երկրաշարժէն ետք, երբ գերմանահայ Ցակոբ Ճամպագեան կը ստեղծէ Հայ Օգնութեան կեդրոնը՝ օժանդակութիւն հասցնելու համար երկրաշարժի աղէտ- եայններուն: Հետագային, Ցակոբ Ճամպագեանի նախա- ձեռնութեամբ Երեւանի մէջ կը ստեղծուի նաեւ «Արմե- նակոր» մշակութային կեդրոնը, ուր սննդական օգնու- թիւն կը տրամադրուի 8000 երեխաներու: Այստեղ դի- մուսներ կը կատարուին նաեւ բնակարանային պայման- ներ բարելաւելու: Այս դիմումները խթան կը հանդի- սանան «Յոյսի աւան»ը ստեղծելու գաղափարին:

70ակններու սկիզբը Լիբանանէն Գերմանիա փո- խադրուած Ցակոբ Ճամպագեանի որդին՝ Պարոյրը կ'ընտան է «Յոյսի աւան»ի կառուցման աշխատանք- ներով: Անոր նպատակը պարզ է ու մեկին՝ «Ձեմ կրնար ունեցածս վայելել ճաշարաններու մէջ, երբ կը տեսնեմ, որ դրացիս անօթի է: Պարտք պիտի տամ հայրենիքս, կարողութեանս սահմաններուն մէջ»: Անոր պատգամը նոյնքան յստակ է՝ «Իւրաքանչիւր հայ պէտք է իր կա- րողութեան չափով օգնէ հայրենիքին»:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ «ԱԶԳԱԿ»Ի ԻՏԵՎ ԿԱԿՈՒՆԻՆՈՒ ԲԱՄԱՐ ԻՏԵՎԱԿԱՆ ԴԵՄՈՒՆԵՐՈՒՆԸ: 258526, 260115 ԵՎ 241274:

www.lemagan.com

«ՄԱՐԿՈ ՊԱՊԻԿԵԱՆ» ԴԱՇՆԱԿԻ ՄՐՅԱՆԸ 2003 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Մարկո Պապիկեան» Երաժշտական Հիմնարկը Լիբանանի Բարձրագոյն Երաժշ- տանոցի եւ Համապայիսի Բարսէլ Կանաչ- Եան Երաժշտական քոլէճի հետ համագոր- ծակցաբար կը կազմակերպէ իր 5րդ մրցան- քը: Այս տարի մրցանքը յատկացուած է դաշ- նակի: Ան օժտուած է երեք մրցանակներով: Առաջին մրցանակ՝ 2500\$ եւ մէկ մենա- համերգ կազմակերպութեամբ Լիբանանի Ազգային բարձրագոյն երաժշտանոցի:

Երկրորդ մրցանակ՝ 1500 \$ Երրորդ մրցանակ՝ 1000 \$ Երգանքին կրնան մասնակցիլ այն թեկ- նածուները, որոնք ունին լիբանանեան, սուրիական, յորդանանեան, եգիպտական եւ կիպրական հպատակութիւն: Մասնակ- ցողներուն տարիքը պէտք չէ անցնի 25ը: «Մարկո Պապիկեան» նախորդ մրցանքնե- րու մրցանակակիրները չունին մասնակցե- լու իրաւունք:

Թեկնածուները պարտին իրենց հետ բե- ռել: Անձնաթուղթի լուսապատճէն: Թեկնած- ւին կողմէ ստորագրուած հաստատագիր մը, ուր ան կ'ընդունի մրցանքի պայմաննե- րը եւ կ'ենթարկուի անոնց պայմաններէ վերապահութեան: Ուսումնական մակար- դակի հաստատագիր մը, իրենց յաճախած հաստատութեան կամ մասնակի ուսուցի- չէն: Ունկադրութիւնները պէտք է ընթանան երեք հանգրուանով՝ բաց ըլլալով հանդի- սատեպին համար. Դեկտ. Դէն մինչեւ 6, Լի- բանանի Ազգային Բարձրագոյն Երաժշտա- նոցին մէջ, Չոքաբ էլ Պլաթ: Երեք մրցանա- կակիրները կը մասնակցին համարութեան համար տրուելիք համերգին՝ Մէն ժուլեֆ Հա- մալսարանի հասարակական գիտութիւն- ներու Փիեռ Ապու Խաթէր Ամֆիթատրոնին մէջ, Դամասկոս փողոց, Ուրբաթ, 12 Դեկտեմ- բեր 2003ի երեկոյեան ժամը 8:30ին:

Մրցանքի կանոնակարգը յայտարար- ւած է Լիբանանի Ազգային Բարձրագոյն Երաժշտանոցի, ինչպէս նաեւ Համապայի- նի Բ. Կանաչեան Երաժշտական քոլէճի մէջ (Համապայիսի Լեւոն Ծանօ Մշակութային Կեդրոն, Պ. Համուտ, Սէն ժուլեֆ եկեղեցիի մօտ): Արձանագրութիւնները տեղի կ'ունե- նան Բարսէլ Կանաչեան Երաժշտական քո- լէճին մէջ, ուրկէ թեկնածուները կրնան ստանալ մրցանքի պարտագիր ստեղծագոր- ծութիւնները: Արձանագրութեան վերջին ժամկէտ՝ 10 Հոկտեմբեր 2003: Արձանագրու- թեան սակ՝ 30.000 լ.ն.

Բարսէլ Կանաչեան Երաժշտական քո- լէճի քարտուղարութեան գրասենեակի բաց է ամէն օր՝ բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, կ.ե. ժամը 3:00էն 7:00: Հեռաձայն՝ 01-265899 01-249375 Ե - նամակ՝ parsegh@cyberia.net.lb hamazib@lynx.net.lb

ՀՈՂԸ ԱՊՐԵԼՈՎ Ե ՈՒԺԵՂ

Յունիսի 20ին, բռնագաղթածների եւ փախըս- տականների միջազգային օրուան կապակցու- քեամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութեան առընթեր միգրացիայի, փախըս- տականների եւ վերաբնակեցման վարչութիւնը դի- մել է բռնագաղթածներին՝ կոչ անելով վերադառ- նալ հայրենիք եւ իրենց գաւազների ապական- կերտել հայրենի հողի վրայ: Դիմումում յոյս է յայտնում, որ այսուհետեւ ոչ ոք բռնի կերպով չի լքի իր հայրենի տունը, բոլոր բռնագաղթա- ցները սեփական ցանկութեամբ կը վերադառնան հայրենիք: Լեռնային Ղարաբաղի Հանրապետու- թեան կառավարութեան առընթեր միգրացիայի, փախտականների եւ վերաբնակեցման վարչու- քիւնը աշխատում է 2003 թուականից: Վարչու- քեան պարտականութիւնը է իրականացնել հա- յախաւաքի ռազմավարական քաղաքականութիւնը: Օրերս այն համղել է եկել դիմում - կոչով, որում մասնաւորաբար ասուում է:

«Մեր առաքելութիւնն է կապ հաստատել 1988 -1992 թթ. պարտադրուած պատերազմի տարիներին Ազրպէյ- ճանի ՍՍՀից բռնագաղթած աւելի քան 500 հազար հա- յորդիներին հետ, որոնք ապրում են Ռուսաստանում ու այլ երկրներում, եւ պայմաններ ստեղծել նրանց համար, որպէսզի բնակութիւն հաստատեն հայրենիքում» Լեռ- նային Ղարաբաղի Հանրապետութիւնում: Պատրաստա- կամ ընդունել բոլոր հայ ընտանիքներին՝ նախկին Խորհրդային Միութեան երկրներից, Հայաստանից եւ Սփիւռքից:

Նրանց համար ստեղծել բարենպաստ պայմաններ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպա- նուանակութիւնն ուժեղացնելու նպատակով վերադառ- կեցման եւ սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնել սահմանային գոտում դտնուող բնակա- վայրերում:

Այս նպատակներին իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը կարիք ունի համայն հայութեան՝ Հայաստանի եւ Սփիւռքի քաղաքական, մշակութային, հասարակական, բարեսիրական կազմա- կերպութիւնների՝ իրենց հնարաւորութիւնների սահ- մաններում աջակցութեանը, եւ այդ առիթով յայտնում ենք, որ՝

- Վերաբնակեցման վարչութիւնը պատրաստ է հա- մագործակցելու Ձեզ հետ, ընդունելու Ձեր առաջարկ- ները եւ ներկայացնելու ոլորտին օժանդակող ծրագրեր:

- Մենք ի վիճակի ենք փոխանցել ձեզ հետաքրքրող նիւթերը:

- 1.- Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառա- վարութեան առընթեր միգրացիայի, փախտականնե- րի եւ վերաբնակեցման վարչութեան կանոնադիրը եւ նպատակները: 2.- Հաշուետուութիւն 1992-2001 թուականների վե- րաբնակեցման ծրագրի արդիւնքների, Լեռնային Ղա- րաբաղի Հանրապետութեան կառավարութեան որոշ- ման մասին, 3.- 2001-2010 թուականների Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան վերաբնակեցման ծրագրի՝ Լեռնա- յին Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութեան որոշման մասին, 4.- Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տա- րածքում վերաբնակուող ընտանիքներին տրամա- րուող արտօնութիւնների մասին, 5.- 2003 թուին Լեռնային Ղարաբաղի Հանրապետու- թեան վերաբնակեցման ծրագրի մասին, 6.- 2003 թուին հոկտեմբերի հաշուին կատարուող աշխատանքների մասին, 7.- Այլ ծրագրեր՝ ա) Բնակարանաշինութիւն, բ) Դպրոցաշինութիւն, գ) Ջրագծեր եւ էլեկտրաէներգիա, դ) Սահմանային բնակավայրերի վերաբնակեցում եւ զարգացում, ե) Գիւղատնտեսական եւ անասնապահական, տնտե- սական ծրագրեր, զ) Հիդրոէլեկտրակայաններ, է) Համալիր ծրագրեր նոր բնակավայր կառուցելու համար:

Շահագրգիռ հասարակական, քաղաքական, բարեսի- րական կազմակերպութիւնները ոլորտին օժանդակե- լու, հնարաւոր չափով մասնակից դառնալու, եւ ար- տերկրում ապրող փախտականները՝ Արցախում վե- րաբնակուելու պայմաններին, ինչպէս եւ այլ մանր- մասնութիւններին ծանօթանալու համար կարող են դի- մել վարչութիւն՝ հետեւեալ հասցեով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան, ք. Ստե- փանակերտ, Ազատամարտիկների 54 Հեռ. 00374 71-40299, E-mail VERABNAK@ktsurf.net:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻԳՐԱՅԻՆՍԻ, ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

www.aztagdaily.com

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԾՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԳՊՐԵՎԱՆՔԻ ՀԳ. ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գպրեվանքի Տեսչութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ արդէն իսկ սկսած է Գպրե- վանքի կրթական յառաջիկայ ՀԳ. (74րդ) տա- րեշրջանին համար նոր սաներու արձանա- գրութիւնը:

Մուտքի արձանագրութիւնն ու քննու- թիւնը տեղի պիտի ունենան Երեքշաբթի, 15 Յուլիսին մինչեւ Հինգշաբթի, 24 Յուլիս 2003, ամէն օր առաւօտեան ժամը 9:00-12:30, Մայ- րավանքէն ներս, Անթիլիաս:

Երկայացող թեկնածուները պարտին ըլ- լալ միջնակարգի եւ երկրորդական ուսման ընթացքին մէջ եղողներ, աւարտած նա- խակրթարանի ուսումը եւ ամբողջացուցած անունային 13-14 տարիքը: Քաջայերելի են յատկապէս մեծ տարիքով տղաքը՝ համալսա- րանական կրթութիւն ստացած կամ այդ հանգրուանին մէջ եղողները:

Երկայացող թեկնածուները պարտին իրենց հետ բերել.-

- 1.- Բարի վարուց վկայագիր՝ ծխատէր քա- հանայէն 2.- Հաստատագիր՝ դպրոցի ծխատէր քա- հանայէն 3.- Վերջին տարուան վիճակագրուցը 4.- Բժշկական վկայագիր 5.- Անձնաթուղթի լուսապատճէնը 6.- Երկու գունաւոր լուսանկար Կոչ կ'ուղղենք մեր ծողովուրդին, որ Գպրեվանք ուղարկեն ուսումնապէս փայ- լուն, Հայ Եկեղեցույ ու սպգին ծառայելու ատակ եւ կարող վաւակներ:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԳՊՐԵՎԱՆՔԻ

ՓՈԼԻԿԼՈԹ ՔՈԼԵԾ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ 31րդ հունձը Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար ՍՍՄԻՐ ԷԼ ԺՍԸՐԻ Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 18 Յուլիս 2003ին, երեկոյեան ժամը 8:00ին, Բապիէ Բլապի սրահին մէջ: ՍՈՒՏԵՐ ԵՐԱՒԻՐՍՈՍՄԱԿ



Կնոջական

ՍՏՈՒԳԵՑԷՔ ՉԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՆՈՐԱՉԵՒՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԷՆ ՆԵՐՍ

Նորածեղության կը հե-
տևի՞ք, տեղեակ էք բոլոր
իրազարձուցիչներէն,
քայլ կը պահէ՞ք նորու-
թիւններուն հետ... Ձեր
գիտելիքներուն մակար-
դակը ստուգելու համար
պատասխանեցէ՛ք ստորեւ
տրուած հարցումներուն:

1 Ո՞վ է «Կուլչի» եւ «Իվ
Սէն Լորան» նորածեղու-
թեան տուներուն տնօրէ-
նը:

2 Լիրանանցի ձեւագէտ
էլի Սաապ Օսքարի արժա-
նացած ո՞ր դերասանու-
հին հազուատր յղացած էր:

3 Ֆրանսացի ո՞ր նշանա-
ւոր դերասանուհին «Իվ

Սէն Լորան»-ի յղացումնե-
րուն դեպքում հին կը
նկատուի:

4 1947ին ո՞վ յղացաւ «Նոր
կերպարանք»ը (Նիու
լուք):

5 Ո՞վ է «Շանէլ» նորածե-
ղուցեան տան ձեւագէտը:

6 Ո՞ր ձեւագէտը հանրա-
ծանօթ է իր մետաղեայ
հազուատներով:

7 Իտալացի ո՞ր նշանա-
ւոր ձեւագէտը տարիներ
առաջ սպաննուած
գտնուեցաւ իր բնակարա-
նին մէջ:

8 Ձեւագէտ Սթէյվա Մա-
քարթնի որո՞ւ դուստրն է:

9 Ո՞ր քաղաքը կը նկատ-
ւի աշխարհի նորածեղու-
թեան փարոսը:

10 Ճէքի Քենետի ֆրան-
սացի ո՞ր ձեւագէտին հա-
զուատները կը հազնէր:

1 Իգյոմ - 01
Եվմոք - 6
Վլլլլմմմմմմ 10 փ
Լմմվլ ցվլլլլլլլ - 8
Վլլլլլլլլլ - Լ
ցլլլլլլլլ օմմ - 9
սլվլլլլլլլլ Լմմ - 5
մսվլլ ցլլլլլլլլլ - 7
Իօցյօցլլ ցվլլլլլլ - 5
վլլլլլլլ վլլլ - 7
սլլլլլլ րսլ - 1
- յգգլլլլլլլլլլ

ՆՈՐԱՉԵՒՈՒԹԻՒՆ 2004Ի ՉՄՐԱՆ ՆՈՐԱՉԵՒՈՒԹԻՒՆԸ

Վերջերս իտալիոյ Միլանօ քաղաքին մէջ ցուցադրու-
եցան 2004ի ձմեռան հազուատները, որոնք, մասնագէտ-
ներու կարծիքով, վերադարձ մըն են դէպի 60ական եւ
80ական թուականները:

Միլանոյի այս մեծ փառատօնին իրենց մասնակցու-
թիւնը բերին Ճիաֆրանքօ Ֆերրէ, Ճորճիօ Արմանի, Տոլ-
չէ Էնտ Կապանա, Ֆերրակամօ, Կուչի եւ բազմաթիւ այլ
ձեւագէտներ ու նորածեղութեան տուներ:

2004ի ձմեռան, նորածեղութիւնը առաւելաբար կը
յատկանշուի «մինի ժիլֆի» (կարճ փէշ) եւ «քուփ սի-
կարէթ» (վերէն վար նեղ) տարատներու վերադարձով:
Կտորները իրենց կարգին կը յատկանշուին երկրա-
չափական գիծերով եւ նկարներով:

Կարգ մը հազուատներ եւ վերադարձներ կը յատկանշու-
ին խոշոր եւ անսովոր օձիքներով:

Լայն երկար քափը եւս վերադարձած է:
Տիրական գոյներն են՝ պորտոն, շագանակագոյնը,
պէժը, իսկ սեւն ու ճերմակը միշտ ներկայ են:

Գիշերային հազուատներու պարզային մուսլինն ու
տանթէլը տիրական են:

Նշենք, որ ձեւագէտ Ռոպերթօ Քալալի յղացումնե-
րը յատկանշուցան խաղաղութեան լոզունգներով: Ար-
դարեւ, շատ մը հազուատներու վրայ կարելի եղաւ կար-
դալ՝ «Ո՛չ պատերազմին», «միայն խաղաղութիւն» եւ
այլն...

Ստորեւ կու տանք Միլանոյի փառատօնին ցուցադրու-
ած հաւաքածոներէն նմուշներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱԽՈՐՈՒՄ



Ամրան եղանակին յաճախակի են ուտելիքներուն
պատճառած թունաւորումները: Թունաւորում կը
պատճառեն առաւելաբար ապուխտի ընտանիքին պատ-
կանող մսեղէնները, սերը, պաղպաղակը, ծովային ու-
տելիքները եւ պահածոները:

Նշենք նաեւ, որ լաւ չպահպանուած կամ սխալ ձե-
ւով ստեղծուած որոշ պահածոներ կրնան թունաւորում
պատճառել: Յիշեցնենք, թէ զետնախնձորի, կանկառի
աղցանները կարելի է օրերով պահել, նոյնիսկ՝ սառ-
նարանին մէջ:

Թունաւորումի ազդանշաններ են՝ փորհարութիւնը,
փսխելը, փորի ցարը, եւ այլն:

ԻՆՉ ԲԱՆ ՊԵՏՔ Է ՄՏԱՀՈՒԹԵՂ

Բարձր ջերմը, տեսողութեան պղտորումը, բերնի չո-
րացումը, շնչելու կամ կլլելու յանկարծակի դժուարու-
թիւնը պէտք է մտահոգեն հիւանդին շրջապատը եւ ստի-
պեն, որ ան անպայման բժշկ տեսնէ: Շատ մտահոգիչ
եւ վտանգաւոր է, երբ ենթական միաժամանակ կը փսխէ
եւ փորհարութիւն ունի: Այդ պարագային անոր մարմ-
նին ջուրը կը նուագի եւ բարձրութիւններու դուռ կը բա-
նայ:

ԻՆՉ ԸՆԵԼ

- Առատ հեղուկ խմել, նոյնիսկ՝ եթէ փսխուքը շա-
րունակուի: Հեղուկներուն մէջէն պէտք է խուսափել
նարինջի հիւթէն, սուրճէն, թէյէն եւ նախապատուու-
թիւնը տալ՝ ջուրին, Սեւըն Ափին, խաչած անանուխին:
- Խուսափել հում ուտելիքներէ եւ նախատուութիւնը
տալ՝ խաչած ըստիպէրներուն, բրինձին, գետնախըն-
ձորին, ստեպիին եւ մածունին:
- Երկու օր ետք բարելաւում չնկատելու պարագա-
յին, ինքնագրուի դարմանումի չդիմել, այլ՝ բժիշկին այ-
ցելել, որպէսզի ճիշդ ախտաճանաչում կատարէ եւ յար-
մար դարմանում մը թելադրէ:

ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՋ, ՅՈՒՆԻՍԻՆ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԳՈՐԾԻՉ ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆԵԱՆ



133 տարի առաջ, Յու-
լիսին, Թիֆ-
լիսի մէջ
ծնած է հայ
մշակույթի
գործիչ
Մարիամ
Թումանյան-
եան: Ան աշ-
խատակցած
է «Ագրիւր»,
«Մշակ»,
«Հասկեր»
եւ այլ պար-
բերութե-
րու: 1902ին Գ.
Սունդուկ-
եանի հետ
Թիֆլիսի

մէջ հիմնած է Հայոց Տրա-
մաթիքական Ընկերու-
թիւնը, զոր նախագահած
է շուրջ չորս տարիներ:
1908ին իր անունը կրող
հրատարակչութիւնը լոյս
ընծայած է գունձուոր
պատկերազարդ մանկա-
կան գիրքեր: Աւելի ուշ
թղթակցած է «Կարմիր
ծիլեր» եւ «Պրոլետար»
թերթերուն: Վերջապէս, ան
նիւթապէս օժանդակած է
բազմաթիւ հայ գրողներու:

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

•Over Bed Table
•All Kinds Of Oxygen
We Also Provide
•Laboratory service,
•Physiotherapist
•Nurses Aids
•P.T.S. (AMBULANCE) ,

ՑՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՍՈՐ ԳՐԱՍԵՆՏԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՅԵՏԻ ՃԵՆԷ, Բ. ՅԱՐԿ (ՇՆՌ. (01) 242553/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ԻՂԻՐԻ ԷԷԷԷ

TANIA TRAVEL
Sodeco Square - Rue Damas
Tel: (01) 616555 (pbx) - Fax: (01) 616561
Rue Sidani - Face cinema Jeanne d'Arc
Tel: (01) 739682 (pbx) - Fax: (01) 340473
Website: http://www.taniatravel.com

CHARTERS ARMENIE
Programme avec Tours (7 et 8 jours)

ATHENES
RHODOS, MYKONOS, CORFU & CRETE
Croisieres vers les Iles Greques

RHODES (8 jours)
Départs tous les Mardis à partir du 15/07

PARIS+COTE D'AZUR
Avion + Grand choix d'Hôtels en B+B
Possibilité d'extension à Lourdes, Eurodisney etc

ITALIE (du Nord et du Sud)
10 Programmes différents (8 à 15 jours)

AUTRICHE
Différents programmes, Hôtels, Tours

ESPAGNE, PORTUGAL et MAROC (Villes Impériales)
10 Programmes différents (8 à 18 jours)

EGYPTE
Le Caire & Croisière sur le Nil-Louxor & Assouan
Sharm el Sheikh, Hurghada, Alazanira

CIRCUIT TUNISIE
Sousse & Hammamet

MALAISIE & THAILANDE
Différents programmes (Tours organisés)

POSSIBILITES DE CREDIT
Jal-el-Dib: 710305/67, Jounieh: 913746/934466
Bikfaya: 982040, Kaslik: 218821/213321
Jbel: 942744/943386, Zahle: 806947/802592
Saïda: 730870/736870, Tripoli: 827755/602469
Amioun: 350075

ԿԻԼԻԿԻԱ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԷՆ 6 ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ՄՈՐԱՆԻՆԸ
ԵՆԵՔ ԽՈՉՈՐԻՆԵՐԸ
ՇՈՒՆԱՅՑԸ
ՔԻՄՈՍ ԻՆՍՏՐՈՒՇՆ
ՏՐԱՊԻՍԵ ԹԱՎԷ
ԿԱՍԵՐՈՒՄՈ ՎԱՐՈՒՆԵՐԸ



365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը 300 տոլար:

•Տըր եւ տիկին Յարութիւն Տարազձեան եւ ընտանիք:

ԽՈՒՍԱԳԻՐ

ՊԱՆԱՆՈՎ ՔԻՈՒԻ




Բաղադրութիւն՝ 4 անձի համար -
4 թուի
2 պանան
1 կիտրոն
2 ապուրի դգալ շաքար
Խորանարդաձեւ կտրտուած պտուղներ


Պատրաստութիւն -
Կեղուցեցէ՛ք թուիներն ու պանանները եւ խորունկ
ամառի մը մէջ փոխադրեցէ՛ք: Աւելցուցէ՛ք կիտրոնի
հիւթն ու շաքարը եւ հարիչով գարկէ՛ք, մինչեւ որ
թանձը, բայց միատարր խառնուրդ մը ստացուի:
Եթէ նկատեցէ՛ք, որ շատ թանձր է, կրնաք քիչ մը սառ-
ջուր աւելցնել խառնուրդին, որպէսզի նօսրանայ:
Ստացուած հեղուկը լեցնել նախապէս պաղեցուած
րաժակներու մէջ:
Ցպիկի վրայ անցընել խորանարդաձեւ կտրտուած
պտուղները եւ գետեղել բաժակին ծայրը եւ կողմերուն:
Հրամցնել պաղ վիճակի մէջ:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱՊԱԼԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՆՃՍԱՐ

ՄԱՐԶԱՇԽԱՐՀԸ ՆԱԵՒ ԳԵՂԵՑԻԿԻՆ ԱՐՈՒԵՍՏՆ Է, ՃԵՆԹԸԼՄԵՆ ՈԳԻԻ ԱՇԽԱՐՀԸ



Թեև սրընթաց արշավող նիթեղինացած աշխարհին մեջ ամենէն աւելի պիկնուրսի վերածուող մարզը սկսած է դառնալ մարզաշխարհը, այսուհանդերձ երբեմն - երբեմն հոն ողջունելի երեւոյթներ կ'արձանագրուին, որոնք ոչ միայն պարզապէս կ'ոգեւորեն մարզասէրները, այլեւ կը յուշեն, թէ մարզաշխարհը տակաւին կը մնայ այն վայրը, այն աշխարհը, ուր կան զեղեցիկներ արուեստը, ճենթըլմէն մարդու վայել կեցուածքներն ու մարզական ոգիի տէր մնալու անգիր օրէնքներն ու չափանիշները:

Այսօրինակ երեւոյթ մը արձանագրուեցաւ նախանցեալ օր, հեծելաբշտի աշխարհին մէջ: Ֆրանսայի շրջափակի 10րդ հանգումն էր մրցումը, որ սկսաւ Կալիէն եւ աւարտեցաւ Մարսելի մէջ (219,5 քմ.), դանիացի Եաքոպ Փիլ եւ իտալացի Ֆապիօ Սաքի, որոնք սկիզբէն ի վեր փախան մեծ փելեթոնէն եւ առանձնացան յատկապէս մրցումին վերջին 15 քիլոմէթրին, շատ հետաքրքրական եւ գեղեցիկ ծեսք մը ըրին, որուն մասին կ'արժէ անպայման անդրադառնալ իբրեւ մարզական ոգիի ողջունելի արտայայտութիւն:

Արդարեւ, երբ մրցումի ժամանան գիծը կը մօտենար այլեւս եւ յստակ էր, թէ վերոյիշեալ երկու հեծելաձուրդներէն մէկն է, որ առաջին պիտի հանդիսանայ, նախքան վճռական սփրինքի սկսիլը, անոնք մօտեցան իրարու եւ իրենց հեծիկներուն վրայէն, քառ միջոցին, իրարու ձեռք սեղմեցին, պարզ խօսքով՝ ձեռնուեցան, ապա դիմեցին վճռական սփրինքին, որ աւարտեցաւ Փիլի մետասաներորդ պահու եւ միայն քանի մը սանթիմէթր առաջնութեամբ յաղթանակով:

Ժեսթը իրապէս կ'ուրախացնէ մարդս, մանաւանդ մարզական աշխարհը սիրող մարդը: Մարզասէրը, իրա՛ւ մարզասէրը քաջ գիտէ, թէ մարզաշխարհին մէջ, յատկապէս անհատական խաղերու մարզերուն մէջ ճենթըլմէն ըլլալը, մարզական ոգի ունենալը անգիր օրէնք է, թէեւ յաճախ դժբախտաբար կ'անտեսուի: Բայց ահա ապիկ երբ տակաւին փաստօրէն կան եւ վստահաբար պիտի շարունակեն ըլլալ մարզիկներ, որոնք մարզական ոգիով կը մօտենան մրցումներուն, ապա մարզասէրները շատ աւելի կը կապուին հետզհետէ վարձագող մարզաշխարհին, ուր յաղթանակին կողքին կայ նաեւ նոյնքան հաւանական պարտութիւն: Եւ եթէ կրնանք բրիտանացի բանաստեղծ Ռուտիարթ Քիփլինկի «Եթէ» խորագրեալ քերթածածին իմաստասիրական գաղափարներուն հետեւիլ ու մանաւանդ պանոն կիրարկել, ուրեմն կրնանք յաւանդաւորութիւն ըլլալ վստահաբար: Քիփլինկ կ'ըսէ. «Եթէ կրնաս պարտութիւնդ ընդունիլ յաղթանակի նման, ապա այն ատեն մարդ ես, տղա՛ս»:

Վերադառնալով Փիլի եւ Սաքիի ծեսքին, անոնք իրենց այդ պարզ ծեսքով, սակայն այնքա՛ն տպաւորիչ կեցուածքով յուզեցին մարզասէրներուն, ուր ամէն բանէ առաջ պէտք է ճենթըլմէն ըլլալ մարզաշխարհին մէջ, որովհետեւ մրցումները կ'արարտին, յաղթանակներն ու պարտութիւնները ի վերջոյ կը մոռցուին, նուաճուած բաժակներն ու չէքերն ալ շուքի մէջ կը մնան օր մը, սակայն մարդուն առաջնութիւնները, ինչպէս նաեւ վատութիւնները չեն մոռցուիր ու ընդմիջտ կ'արձանագրուին պատմութեան ոսկի կամ սէն էջերուն մէջ հաւասարապէս:

Փիլ եւ Սաքի իրենց այդ ծեսքով կասկածէ վեր է անշուշտ, թէ ո՛ր է ի՛նչ գոյներով արձանագրեցին իրենց անունը հռչակաւոր «Թուր Տը Ֆրանս»ի հարիւրամեայ պատմութեան էջերուն մէջ:

ՄԱՐԶԱՍԵՐ

«ԶէՄփիլըն, 2 Լիկ»ի Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆ

ՓԻԼՆԻԿ ԵՐԵՒԱՆ 1-0 ԱՐԴԻԲԵՐՈՎ ՏԱՊԱԼԵՑ ՌԵՅԵՒԱԿԻԸ

«Զէմփիլըն Լիկ»ի 2003-2004 եղանակի պտուհի Ա. հանգրուանի երթի մրցումներուն, երէկ Հայաստանի ախոյեան եւ բաժակակիր Փիլնիկ Երեւան Հանրապետական մարզադաշտին վրայ հիւրընկալեց Իսլանտայի Ռէյքիաւիքը եւ 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց անոր դէմ:

Նշենք, որ մեծաթիւ համակիրներու ներկայութեան հայրենի ֆուտպոլիստները տիրական ներկայութիւն էին դաշտին վրայ եւ արժանի յաղթանակին: Փիլնիկ Երեւան չկրցաւ իր նպատակին հասցնել փենալթի մը: Բ. հանգրուան հասնելու պարագային անոնք իրենց դէմ պիտի ունենան Սոֆիայի Բանակայինները (Պուլկարիա):



ԻՐԱՔԻ ՄԵՋ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԱՇԽՈՒԺԱՅՆԵԼՈՒ ԴՍՍԱՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ ԿՈՒՂՂՈՒԻՆ ԴԵՊՈՒՐԱՔ

Այս շաբաթ Իրաք պիտի հասնի Միջազգային Ողիմպիական Կոմիտէի պատասխանատուներու խումբ մը, որ պիտի կատարէ հարկ եղած աշխատանքները, պարզելու համար, թէ ի՞նչ միջոցներու պէտք է դիմել վերաշխուծացնելու համար մարզական կեանքը Իրաքի մէջ:

Պատասխանատուներու այս խումբը հանդիպումներ պիտի ունենայ ՄԱԿի, ինչպէս նաեւ տեղւոյն մարզական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Նշենք, որ այս օրերուն Պարսէլոնայի մէջ տեղի ունեցող լողի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն իրաքցի 4 լողորդներ: Անոնք առաջին մարզիկներն են, որոնք յետպատերազմեան Իրաքը կը ներկայացնեն միջազգային մրցաշարքի մը ընթացքին:

Ա. ՄԷ. ՄԻԼԱՆ ԿՈՒՂԸ ԶԵՌՔ ԶԳԵԼ ԹԻԱԿՕ ՄՈԹԹԱՆ

«Զէմփիլըն Լիկ»ի տիտղոսակիր Ա. Մէ. Միլան ամէն ճիգ կը քափէ ձեռք ձգելու համար Պարսէլոնայի միջնապահներէն Թիալօ Մոթթան:

Արդարեւ, «Կապեթա Տելլօ Սփոր» թերթը իր երէկուան թիւին մէջ գրած էր, թէ Միլանի փոխ նախագահը եւ տնօրէնը ուղղուած էին Սպանիա, համաձայնութիւն մը գոյացրելու համար Պարսէլոնայի հետ, որպէսզի 20ամեայ պրպօլիցին ստորագրէ Միլանի տոմարներուն վրայ, փոխարէնը Միլան պատրաստ է սպանական ակումբին «շնորհելու» 31ամեայ իտալացի Տեմիթրիօ Ալթաքիին կամ պրպօլիցի Ռոքի ձուները:

Նշենք, որ Մոթթա 16 տարեկանին միացած է Պարսէլոնայի եւ բարձրագոյն դասակարգի իր առաջին մրցումը կատարած 2001ի Հոկտեմբերին: Ան այս օրերուն



Կը գտնուի Մեքսիքո, ուր Պրպօլի շապիկով իր մասնակցութիւնը կը բերէ Քոնքաքաֆի «Կոլտ Բաֆ»ի մրցաշարքին:

«ՖՈՐՄԻԼԱ-1»

ՌԱԼՖ ՇՈՒՄԱԽԸՐ ԶԵՌՆՈՅ ԿԸ ՆԵՏԵ ԻՐ ԱԻԱԳ ԵՂԲՕՐ

Կիրակի օր տեղի ունենալիք Բրիտանիոյ «Կրան Փրի»ին Մայքըլ Շումպիւրը շատ բան ունի փաստելիք, մինչ իր եղբայրը՝ Ռալֆ, կը շարունակէ լուսարձակները իր վրայ կեղծանացնել: Իր ասպարէզի ճիշդ տիտղոսին տիրանալ փորձող Մայքըլ Շումպիւրը կը խոստովանի, թէ այս եղանակին ցարդ ամենէն աւելի տպաւորող վարորդը իր կրտսեր եղբայրն է:

Արդարեւ, Ռիլիըմսի վարորդ Ռալֆ Շումպիւրը շահած է նախորդ երկու «Կրան Փրի»ները եւ միակ վարորդն է, որ ցարդ տեղի ունեցած բոլոր «Կրան Փրի»ներուն յաջողած է կէտեր ապահովել:

Ան թէեւ 11 կէտով ետ կը մնայ Մայքըլ Շումպիւրէն եւ կը գրաւէ ընդհանուր դասաւորման 3րդ դիրքը՝ Մըքլարէնի Քիմ Ռայթընի հետին, սակայն վերջին 2 «Կրան Փրի»ներու տիտղոսները իր գրպանը՝ շատ աւելի ինքնավստահ կը թուի ըլլալ:

Մայքըլ Շումպիւրը, իր կարգին, կ'ուզէ շահիլ Բրիտանիոյ «Կրան Փրի»ն այսպիսով Ֆեռարիի հետ իր հնձած տիտղոսներուն թիւը հասցնելով 50ի:

ԼԻԲԱՆԱՆԻ ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ԱՍՍՈՆԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔ

ՌԱԶՄԻԿ ՇԷՄՄԷՄԵԱՆ ԱՐԶԱՆԱԳՐԵՅ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Երէկ Մոն Լա Սալի մէջ սկսաւ Լիբանանի փինկ փոսի տղոց ամառնային մրցաշարքը: Հ. Մ. Բ. Մ. Պէյրութի մարզիկ Ռապիկ Շէմմէան իր առաջին մրցումին 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Մարք Ըսթան, 3-1 արդիւնքով պարտութիւն կրեց Մարուան Պըպրիէն:

Այսօր կը սկսին աղջկանց մրցումները, որոնց պիտի մասնակցին Հ. Մ. Բ. Մ. ական չորս մարզիկներ:

Ստորեւ անոնց կատարելիք մրցումները. Լարա Բէչէպաշեան - Սիլվանա Ջոէյպ Դուիճ Մուհեջոլեան - Լարա Զէյնըտին Նոէլ Բէշիշեան - Մուհիթա Ալի Հասան Լիզա Պարիկեան - Նաթալի Պէսիլ

ԹԵՆԻՍ

ՄԱՐԳՍԵԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ

Շթուրթարթի մէջ (Գերմանիա) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին, որուն նիթական մրցանակը կը հասնի 765 հազար եւրոյի, հայրենի թենիսիստ Սարգիս Սարգսեան չյաջողեցաւ շարունակել յաղթական երթը եւ Բ. հանգրուանի իշ. երէկուան մրցումին 6-4 եւ 6-4 արդիւնքով տեղի տուաւ մրցաշարքի թիւ 5 դասուած չէի Երիկ Նովաքի դէմ:

Իր կարգին, սպանացի Ալէքս Քոբրէթա տապալեց պելճիքացի Օլիվիէ Ռոխըրը (4-6, 6-1 եւ 7-5), իսկ ռուս Միխայիլ Եւմուի 6-3, 2-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց էքուատորցի Նիքոլաս Լաֆէնթին:

● <ՈՒՆՏԱՅԻ ԱՍՐԱ Ֆուրք քաղաքին մէջ տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին չիլիցի Նիքոլաս Մասու (դասուած 7րդ) տապալեց պրպօլիցի Անտրէ Սան (6-2 եւ 6-2), մինչ իտալացի Տենիս Վան Շեփիլինկէն 4-6, 6-4 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց թիւ 9 դասուած արժանթինցի Ֆրանքօ Սքուիլարին:

ԼԷՍ ՖԵՐՏԻՆԱՆՏ ՄԻԱՅԱԻ ԼԱՅՍԹԸՐ ՍԻԹԻԻ

Անգլիացի միջազգային նախկին յառաջատան Լէս Ֆերփինսանը անցեալ շաբաթավերջին միացաւ նոր բարձրագոյն դասակարգ բարձրացած Լայսթըր Սիթիի, մէկ փարուան ղայմանագրութիւն մը սպորտագրելով խումբին հեզ:

Նախատես Քոլինգ Փարք Ռէյնըքզի եւ Նիքէյսըի մաս կազմող 31 փարեկան Ֆերփինսանը, 2002-2003 եղանակի աւարտին դարձաւ ազատ մարզիկ մը, երբ անոր ղայմանագրութիւնը աւարտեցաւ Ուէսթ Մամի հեզ:

ԼՈՂԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՀԷՅՍԵՆՋ ՏԻՐԱՅԱԻ ՈՍԿԻ ՄԵՏԱԼԻՆ



Սպանիոյ մէջ տեղի ունեցող լողի աշխարհի ախոյեանութեան չորրորդ օրուան մրցումներուն, երէկ, քանասացի Էմիլի Հէյմէս տիրացաւ 10 մէթր բարձրութեան ցատկելու մրցումներու ոսկի մետալին: Երկրորդ եւ երրորդ դիրքերը գրաւեցին յաջորդաբար Լաօ Լիշի եւ Լի Նա, երկուքն ալ Չինաստանէն:

